



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

“ 05 ” 04 2019 թ.

N 05-Ձ

ք. Երևան

**ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» կետի դրույթով.

1. Հաստատել փոստային վճարման պետական նշանների նմուշները՝

1) Միջազգային. Եվրոպա 2019. Ազգային թռչուններ թեմային նվիրված «Գյուղական ծիծեռնակ. Hirundo rustica» նամականիշի, համաձայն N 1 հավելվածի:

2) Միջազգային. Եվրասիական Տնտեսական Միություն թեմային նվիրված «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՈՒԹՅՈՒՆ. ЕВРАЗИЙСКИЙ ЭКОНОМОЧЕСКИЙ СОЮЗ» նամականիշի, համաձայն N 2 հավելվածի:

3) Մեծանուն հայեր. Վարդան Մախոխյանի ծննդյան 150-ամյակը թեմային նվիրված «<150th. ամյակ. anniversary. ՎԱՐԴԱՆ ՄԱԽՈՒՅԱՆ. ՀԱՅ ՆԿԱՐԻՉ. ARMENIAN PAINTER. VARDAN MAKHOKHIAN. 1869-1937>> 1 նամականիշով բացիկի, համաձայն N 3 հավելվածի:

4) Գիտություն և տեխնիկա. Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակը թեմային նվիրված «YEREVAN STATE UNIVERSITY. 100th ամյակ anniversary. ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» նամականիշի, համաձայն N 4 հավելվածի:

5) Հայոց պատմություն. Հայաստանի պատմական մայրաքաղաքներ. Անի. Երևան թեմային նվիրված «Անի մ.թ. X դար / Ani X century A.D. Հայաստանի մայրաքաղաքներ / Capitals of Armenia» և «Երևան մ.թ. XX դար / Yerevan XX century A.D. Հայաստանի մայրաքաղաքներ / Capitals of Armenia» 2 նամականիշի, համաձայն N 5 և N 6 հավելվածների:

6) Հայոց պատմություն. Հայաստանի առաջին նամականիշի 100-ամյակը թեմային նվիրված «<100th. ԱՄՅԱԿ. ANNIVERSARY. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԱՆԻՇ. FIRST POSTAGE STAMP OF ARMENIAN>> նամականիշի, համաձայն N 7 հավելվածի:

2. Գործողության մեջ դնել՝

1) Միջազգային. Եվրոպա 2019. Ազգային թռչուններ թեմային նվիրված <<Գյուղական ծիծեռնակ. Hirundo rustica>> նամականիշը, սահմանելով անվանագինը՝ 350 դրամ, տպաքանակը՝ 30 000 հատ:

2) Միջազգային. Եվրասիական Տնտեսական Միություն թեմային նվիրված <<ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ. ЕВРАЗИЙСКИЙ ЭКОНОМОЧЕСКИЙ СОЮЗ>> նամականիշը, սահմանելով անվանագինը՝ 330 դրամ, տպաքանակը՝ 30 000 հատ:

3) Մեծանուն հայեր. Վարդան Մախոխյանի ծննդյան 150-ամյակը թեմային նվիրված <<150th. ամյակ. anniversary. ՎԱՐԴԱՆ ՄԱԽՈՒՅԱՆ. ՀԱՅ ՆԿԱՐԻՉ. ARMENIAN PAINTER. VARDAN MAKHOKHIAN. 1869-1937>> 1 նամականիշով բացիկը, սահմանելով անվանագինը՝ 240 դրամ, տպաքանակը՝ 500 հատ:

4) Գիտություն և տեխնիկա. Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակը թեմային նվիրված <<YEREVAN STATE UNIVERSITY. 100th ամյակ anniversary. ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> նամականիշը, սահմանելով անվանագինը՝ 220 դրամ, տպաքանակը՝ 30 000 հատ:

5) Հայոց պատմություն. Հայաստանի պատմական մայրաքաղաքներ. Անի. Երևան թեմային նվիրված <<Անի մ.թ. X դար / Ani X century A.D. Հայաստանի մայրաքաղաքներ / Capitals of Armenia>> և <<Երևան մ.թ. XX դար / Yerevan XX century A.D. Հայաստանի մայրաքաղաքներ / Capitals of Armenia>> 2 նամականիշը, սահմանելով անվանագինը՝ 160 և 170 դրամ, տպաքանակը՝ յուրաքանչյուրից 30 000 հատ:

6) Հայոց պատմություն. Հայաստանի առաջին նամականիշի 100-ամյակը թեմային նվիրված <<100th. ԱՄՅԱԿ. ANNIVERSARY. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԱՆԻՇ. FIRST POSTAGE STAMP OF ARMENIAN>> նամականիշը, սահմանելով անվանագինը՝ 230 դրամ, տպաքանակը՝ 40 000 հատ:

ՆԱԽԱՐԱՐ

Հ. ԱՐՇԱԿՅԱՆ

“ 05 ” 04 2019թ
ք. Երևան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հավելված 1
ՀՀ տրանսպորտի, կապի և
տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի
2019թ ապրիլի 5-ի թիվ 05-Ջ հրամանի

